ՄԻՔԱՅԵԼ ԱՏՏԱԼԻԱՏԵՍԻ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ[1], ՎԵՍՏԻ[2] ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ[3], Ի ՊԱՏԻՎ ԲՈՏԱՆԻԱՏԵՍ ԿԱՅՍԵՐ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

Ո՛վ դու ամենասուրբ թագավոր, որ քո համայն գիտելիքները՝ ռազմավարության, մարտերում և ամեն կարգի պատերազմական գործերում ու սխրագործություններում ի հայտ բերեցիր դեռ նախքան թագավորական ծիրանին հագնելը, մեզ բոլորիս արժանացրիր քո մարդասիրությանը, քո հեզությամբ ապացուցեցիր ամեն տեսակի սնափառությունից զերծ լինելդ, այդ իսկ պատճառով ամենքիս համար ամենացանկալին էիր, արժանին թագավորական ամենաբարձր աստիճանին: Կամոքն Աստուծո և մեր բոլորիս թախանձանքներով, քո գերբնական բարեմասնություններին հասու մարդկանց հավանությամբ դառնալով կայսր, մեզ բոլորիս արժանացրիր քո հորդառատ բարության հարստությանը, տիրացածդ վսեմ պատվին, պետական ամենաբարձր կոչմանը վայել ձևով:

Դու հպատակ ժողովրդին փառավորեցիր բազմազան պատիվներով, նվիրատվություններով, անթիվ շնորհներով, որքան քեզանից առաջ թագավորած բոլորը միասին իրենց ժամանակներում չցուցաբերեցին մարդկանց, դու հիրավի քեզանից առաջ թագավորածներից ամենակատարյալ թագավորը եղար: Դեռ երիտասարդ հասակում մեծ սխրանքներ գործելով, բազում թշնամիների ու բռնակալների հնազանդեցրիր: Այդ է պատճառը, որ քո բոլոր սխրագործությունները շարադրել ջանացող գրողի համար դարձար մրցության առարկա: Դու օլիմպիական խաղերում հաղթողի նման, հիրավի, ամեն ինչում հաղթական դարձար, աշխարհում գովքի արժանի և ոչ մի բան չթողեցիր անկատար ու չհաղթահարված: Դու քո ամբողջ էությունը նվիրաբերեցիր մտավոր ու ֆիզիկական ամենաբարձր գործունեության, ցերեկները քեզ ավանդելով սխրանքների ու բազում գործերի խոնջանքին:

Ի լրացումն աշխարհի, ավելի ճիշտ՝ ավելի քան աշխարհի փառքի, քեզ գեղեցկագույն գործերի նախապատրաստելով՝ ծիրանին և թագը կայսերական ոչ բավարար նշանակներ համարեցիր, և որպես բարեմասնությունների թագ ու արտասովոր ծիրանի ամեն ինչում բարեպաշտ, մարդասեր և առաքինի լինելը համարեցիր, քեզ

պսակած Աստծուն, ինչքան դա հնարավոր է մահկանացուին, նմանվելու անչափ ջանք թափեցիր: Ընթերցանությամբ ու սերտմամբ դու հետամուտ եղար հավասարակշիռ ու օրենքով դատել, անհրաժեշտը գործել, և, որպես ճշմարիտ հանգանակ, լռելյայն ցույց տալ գրքերի քո գիշերային սերտումները, ապացուցելու, որ հիրավի ուսումնասիրում ես գրքերը, նրանցում գրվածին աչալուրջ:

Այդ բոլորով հանդերձ, դու մեր առաջ ավելի մեծ ու դժվարին խնդիրներ դրեցիր, այն է՝ քո այդ մտավոր գործերի մասին արժանի աշխատանք արարել: Ահա այդ բոլորը նկատի ունենալով, ես մի գիրք շարադրեցի, որը հերթականությամբ ներկայացնում է մեր ժամանակներում տեղի ունեցած դեպքերը՝ պատերազմներն ու ճակատամարտերը, ձեռք բերված հաղթանակներն ու կրած պարտությունները, պատերազմական հաջողություններն ու անհաջողությունները, նշելով, ինչքան դա հնարավոր է, տեղի ունեցածի պատճառները, կամ կարծես համեմելով այդ ընթացքում տեղի ունեցած անակնկալ, տարերային երևույթների նկարագրությամբ, հարմար առիթով՝ հիշատակելով իշխանների և կայսրերի առաքինություններն ու անվայելությունները, անդրադառնալով նաև մի քանի բնական երևույթների ու հիշյալ ժամանակներում երևացած անսովոր արտաքինով կենդանիների: Կարճ ասած, գլուխ բերեցի այլևայլ բովանդակությամբ, ծաղկաշատ դաշտի նմանվող մի գիրք՝ այդ բոլորը բացատրելու համար: (Թեև սույն գրքում խոսվում է մեզ հայտնի դեպքերի մասին, բայց ներկայիս տեղի ունեցածը չի կարելի լռության մատնել և մարդկանց հիշողությունից հանել):

Որպես նվեր, ծառայի ընծա, սույն գիրքը բերում եմ ու պարգևում քո մարդասիրությանը և քրիստոսասեր ջանասիրությանը, որպեսզի սույն գիրքը քո դատին, քո հանճարեղ ընթերցմանն արժանանա, եթե, հարկավ, այն հաջողված կարելի է համարել: Եթե ոչ այլ ինչ, համենայն դեպս իմ դեպի քեզ ունեցած ծառայությունն ու հավատարմությունը թող ընկալվի որպես ցանկալի խունկ քո ամենաթագավորական ու մարդասիրական մեծությանը, ակնկալելով քո ուշադրությունը ոչ մատուցածի արժեքի հանդեպ, այլ որպես նվիրաբերողի ցանկության ու հավատարմության գրավական: